ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ



Տ. ԽՈՐԵՆ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՈՒՔՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՍԲՑ. ՂԵՒՈՆԴՅԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(9 փետրվարի 2021 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն։

Վեհափառ Տեր, Գերաշնո՛րհ Սրբազան հայրեր, Հոգեշնո՛րհ եւ Արժանապատի՛վ քահանա հայրեր, բարեշնո՛րհ սարկավագ եղբայրներ եւ սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ,

Թո՛ւյլ տվեք, այս պահին բոլորիդ թարգմանը լինելով, ձեր իսկ անունից մեր խորին շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնել Վեհափառ Հայրապետին այս քաղաքական, ընկերային եւ տնտեսական ծանր պայմաններում Ղեւոնդյանց քահանայից հիշատակման տոնի առիթով վերստին գտնվելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հյուրընկալ ջերմության ներքո։

Ս. Պատարագի միասնական եւ ընդհանրական աղոթքի մեջ գտնվելով՝ մասնավոր եւ առանձնահատուկ զգացողություններ ենք ապրում, որովհետեւ հնարավորություն է ընձեռված մեզ հոգեւոր ծառայության քահանայական ուխտը վերանորոգելու, առավել եւս արժեւորելու դարերի խորքից եկող՝ «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» խորհրդով ապրելու հոգեւոր առաքինությունները։

Վեհափա՛ռ Տեր, մաղթում ենք Ձեզ ուժ, կարողություն, անսպառ եռանդ՝ ուղիղ վարդապետության մեջ մեզ պահելու եւ առաջնորդելու, ի փառս Աստծու պայծառացնելու եւ զորացնելու Հայ Առաքելական Ս. Եկեղեցին։

Պատմության մեջ ժողովուրդների համար կան տարեթվեր, որոնց հիշատակը, տոնակատարությունը բորբոքում են ժողովրդի սրտի մեջ անթեղված կրակներ։ Այդպիսին է մեր ժողովրդի պատմության մեջ 451 թ.

Ղեւոնդյանց եւ Վարդանանց հերոսամարտը։ Դ. դարի սկզբին մեր ժողովուրդը քրիստոնեական կրոնի ընդունմամբ սահմանազատվում է իր դրացի հզոր պարսկական կրոնամշակութային ազդեցության ոլորտից։ Պարսկական եւ բյուզանդական երկու հզոր կայսրությունների վարած քաղաքականությունը, 387 թ. Հայաստանի բաժանումը նրանց միջեւ, ներքին երկպառակությունները, տնտեսական եւ քաղաքական ազդակներն օրըստօրե թուլացնում էին հայ Արշակունիների իշխանությունը, եւ Հայաստանը վերածվում էր տկար մի պետության։ Հայաստանի քաղաքական անկումը պարսկական գահ բարձրացող Սասանյան հարստության ներկայացուցիչներին չէր բավարարում։ Նրանց նպատակն էր կայսրության սահմաններում ստեղծել միասնական մի ուժ՝ վերջ տալու կրոնական եւ քաղաքական կիսանկախ վիճակներին, ստեղծելու միաձույլ ու միակրոն մի ժողովուրդ։ Հայերին ձուլելու այս քաղաքականությունն ավելի ցայտուն է դառնում 429 թ. Արշակունիների թագավորության անկումից հետո, երբ Հազկերտը հայերին առաջարկում է ուրանալ քրիստոնեությունը։ Հայ ժողովուրդն Աշտիշատի ժողովում մերժում է առաջարկը եւ մարտահրավեր նետում պարսկական բռնակալության դեմ՝ հանուն հայ հողի, ջրի, հավատքի, վասն Հիսուսի ու հայրենյաց։ Պայքարի առաջին ազդանշանը տրվում է Անգղ գյուղում Ղեւոնդ քահանայի առաջնորդությամբ՝ հարվածելով եկեղեցին քանդել փորձող մոգերին ու պարսկական զորքին։ Ավարայրի ճակատամարտից առաջ հայ հոգեւորականությունը Ղեւոնդ երեցի գլխավորությամբ ոգեշնչում է հայ ռազմիկներին եւ կոչ անում համախմբվելու սպարապետի դրոշի ներքո։ Հայ ժողովուրդն այս կենաց ու մահու պայքարում իր լեզուն, մշակույթը, հողը եւ հավատքը պաշտպանելու գործում մնում է միայնակ իր Աստծու հետ, եւ այդ նրան չի հուսալքում, քանզի՝ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» (Եղիշէ)։ Սակայն Ավարայրի ճակատամարտով պատերազմը չի վերջանում, այն շարունակվում է Հայաստանի այլեւայլ գավառներում։ Նահատակված Վարդան Մամիկոնյանի, հոգեւորականների, նախարարների եւ 1036 մարտիկների հերոսական պայքարի ոգին շարունակվում է մոտ 30 տարի, եւ 481—484 թթ. Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբության հաղթանակով՝ Նվարսակի դաշնագրով պարսիկներն ընդունեցին հայ ժողովրդի հոգու անկախությունը, իր կյանքը տնօրինելու իրավունքը։ Ղեւոնդյանց եւ Վարդանանց հերոսամարտի հիշատակումը մեր ազգային արժանապատվության բարձր

գիտակցության, հայրենասիրության, աստվածսիրության, նահատակության եւ գոյության հարատեւության պատմությունն է։ Այսօր ամեն մի հայի համար հայրենիքը, Եկեղեցին, լեզուն, հազարագանձ իր մշակույթը պահելու ուխտը վերանորոգելու լավագույն օրն է։

Սիրելի՛ հոգեւոր եղբայրներ եւ հավատացյալ ժողովուրդ, վերջին շրջանին մենք ազգովին պայքարում ենք մի քանի հազկերտների կողմից միավորված ոճրագործ խմբի դեմ։ Վերջին պատերազմին մենք ունեցանք նահատակներ, որոնց հայրենասիրական նահատակության ոգու առջեւ խոնարհվում ենք։ Նրանք Ղեւոնդյանց եւ Վարդանանց հերոսական ոգով լցված նահատակվեցին՝ «վասն հայրենեաց իմացեալ» մահով։ Որքան էլ դառն եղավ մեզ համար պատերազմի ելքը, մենք իրավունք չունենք հուսահատվելու։ Ինչպես Ղեւոնդյանց եւ Վարդանանց նահատակների թափված արյան գինը եղավ մեր գոյության հարատեւությունը, այնպես էլ Արցախյան պատերազմի նահատակների զոհաբերության գինը եղավ երկրորդ անգամ ցեղասպանության չենթարկվելու առհավատչյան։ Ամբողջ աշխարհը հասկացավ, նաեւ մեր դարավոր թշնամին, որ հայ ժողովուրդը խեղճ ու կրակ, Դեր Զորի անապատով թափառող եւ մորթվող ազգ չէ։ Մեր նորօրյա Ղեւոնդների եւ Վարդանների նահատակությունն այլեւս թույլ չի տալու երկրորդ եւ ավելի անգամներ բարձրանալ Ծիծեռնակաբերդ։

Սիրելի՛ հոգեւոր եղբայրներ, շնորհավորում եմ բոլորիս Ղեւոնդյանց քահանայից տոնի առիթով, աղոթում, որ Աստված բոլորիս իմաստություն պարգեւի, ուժ, կարողություն, որպեսզի հոգեւոր ծառայության քահանայական ուխտի վերանորոգումով մեր նախանձախնդիր եւ նվիրյալ ծառայությամբ, առանձնահատուկ ջերմությամբ մեր ժողովրդին առաջնորդենք Ավետարանի կյանքով, Հիսուս Քրիստոսի պատգամներով եւ պատվիրաններով, Նրա սիրո վարդապետությամբ, որպեսզի մեր միջից վերանա անմիաբանության հազկերտը, անտարբերության եւ անհանդուրժողականության հազկերտը, հակառակության եւ ատելության հազկերտը, մեր ինքնության հետ առնչություն չունեցող, հոգեւոր եւ ազգային ժառանգությունը մերժող հազկերտը, Եկեղեցու դերն ու նշանակությունը չգնահատող ու չարժեւորող հազկերտը, մոլություններով եւ այլասերվածությամբ ապրող հազկերտը, չապաշխարող եւ հոգեւոր փրկությունը չփնտրող հազկերտը, եւ վերջապես՝ չարությամբ եւ ոխակալությամբ ապրող վրեժխնդիր հազկերտը։ Ղեւոնդյանց եւ Վարդանանց հերոսական ոգին մեզ համար թող լինի մի-մի հատու զենք, որ

կարողանանք բոլոր ժամանակների «վասն հաւատոյ եւ վասն հայրենեանց» նահատակների երազանքները եւ պատմական արդարությունը վերականգնել ու հաստատել։

Ղեւոնդյանց եւ Վարդանանց հերոսամարտը լոկ մի դյուցազնական դրվագ չէ, այլ դարեդար ապրող, ներշնչող, կազմակերպող մի ուժ, մի ոգի, հրեղեն մի սյուն՝ հայոց երկնակամարի վրա միշտ բոցավառվող, որն առաջնորդել է մեր ժողովրդին իր պատմության քառուղիներում։ Դրա շնորհիվ է, որ այսօր կանք, ապրում ենք։ Աստծու օրհնությունը թող մեզ առաջնորդի, իմացյալ մահով մեզնից յուրաքանչյուրը հաջորդ սերնդին փոխանցի այն ապրումն ու զգացողությունը, որի միջոցով նրանք հաստատվելու են աստվածասեր, եկեղեցասեր, հայրենասեր եւ մարդասեր ու բարեպաշտ կյանքով ապրող առաքինությունների մեջ։

Հիշատակման այս օրը նաեւ լավագույն առիթ է Ղեւոնդյանց քահանայից եւ Վարդանանց նահատակների բարեխոսությունը հայցելու մեր մեղքերի թողության համար, լավագույն առիթ՝ առաջնահերթ հաստատվելու աստվածսիրության մեջ եւ նրանից բխող մարդասիրության, ազգասիրության եւ հայրենասիրության մեջ։ «Եւ սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, եւ յամենայն անձնէ քումմէ, եւ յամենայն մտաց քոց, եւ յամենայն զօրութենէ քումմէ. այս է առաջին պատուիրան» (Մարկ. ԺԲ. 30—31)։ Աստվածսիրության եւ հայրենասիրության կենտրոնում մարդն է։

Թող Աստված մեր նահատակների բարեխոսությամբ պահի, պահպանի մեր հայրենիքը, Հայոց բանակը, մեր ժողովրդին, եւ Ս. Հոգու ներգործությամբ հաստատվենք սիրո, ներողամտության մեջ ու միաբանված, միասիրտ ու միախորհուրդ կյանքի կոչենք ազգային իղձերն ու երազանքները. ամեն։